««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
Հասցե: Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անկախության հրապ. 9ա, 3-րդ հարկ, 1-3 սենյակ
էլ. փոստ: compassgyumri@gmail.com էլ. կայք: www.compass-center.org
Հեռ. (+374 312) 6 01 00, (+374) 95 84 09 06

01/06 01/06/2021

Հարգելի պարոն Բալասանյան,

Տեղեկացնում ենք, որ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն 2020թ. նոյեմբերի 1-ից ՀՀ-ում իրականացնում է «Նորարարություն փոփոխության համար-Հայաստան/I4C Armenia» ծրագիրը, որը ֆինանսավորվում է TIDES կենտրոնի և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից, որի շրջանակներում հայտարարվել է դրամաշնորհային փուլ: Դրամաշնորհային փուլի նպատակն է բարելավել ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները՝ շեշտադրելով Covid-19-ով պայմանավորված մարտահրավերները, նոր իրավիճակը և իրական կարիքների հասցեագրման ուղղված գործողությունները, ինչպես նաև խթանել քաղաքացիների ակտիվությունը համայնքներում՝ մեծացնելով վստահությունը ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի նկատմամբ:

«Կոմպասս» ՀԿ-ն վերոնշյալ մրցույթին ներկայացրել է «Նորարար բջջային հավելված՝ հանուն քաղաքացիների ներգրավվածության ու ՏԻՄ կառավարման բարելավման Գյումրիում» ծրագրի առաջարկը, որի շրջանակներում ակնկալվում է համագործակցություն Գյումրու ՏԻՄ հետ: Ծրագրի առաջարկում Գյումրու համայնքապետարանից ակնկալվում է ստեղծվելիք բջջային հավելվածի մեջ համայնքի բյուջեից մոտ մեկ միլիոն դրամի չափով ներդրում, ինչպես նաև քննարկումներին մասնակցություն, իսկ դրա գործարկումից հետո հավելվածի օգտագործում և արձագանքների տրամադրում բարձրացված խնդիրներին ու հարցերին:

Կից ներկայացնում ենք ծրագրի հակիրճ նկարագիրը, բյուջեն և առաջարկում ծրագիր-առաջարկը ներկայացնել Գյումրու ավագանուն՝ «Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածից համապատասխան միջոցների հատկացման հարցով:

Հարգանքով,

Ղարիբ Հարությունյան

«Նորարար բջջային հավելված՝ հանուն քաղաքացիների ներգրավվածության ու ՏԻՄ կառավարման բարելավման Գյումրում» ծրագրային առաջարկի հակիրճ նկարագիր

Ծրագրի նպատակն է նպաստել Գյումրի համայնքում քաղաքացիների ներգրավվածության բարձրացմանը համայնքի իշխանությունների կողմից կայացվող որոշումներում՝ ներդնելով հաշվետվողականության ու մասնակցայնության ապահովման նորարար համակարգ։

Ծրագրի թիրախային խմբերն են հանդիսանում Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքապետարանն ու ավագանին, իսկ շահառու է հանդիսանում համայնքի բնակիչները։

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել բջջային հավելված։ Բջջային հավելվածը նախատեսված է լինելու համայնքի բնակիչների և ՏԻՄ-ի շփումն առավել ինտենսիվ ապահովելու համար։ Բնակիչները կարողանալու են գրանցվել հավելվածում, լրացնել իրենց անձնական ինֆորմացիան, անցնեն վերիֆիկացում ադմինիստրացիայի կողմից անձնագրի տվյալների միջոցով, որպեսզի բացառվի այլ համայնքների ներկայացուցիչների մուտքը, որից հետո նրանք կկարողանան մուտք գործել իրենց անձնական էջ, խմբագրել իրենց հետաքրքրությունների շրջանակը։

Ակնկալվում է արդյունավետ համագործակցություն կողմերի միջև, որը ենթադրում է փորձի փոխանակում, ինֆորմացիոն ու ֆինանսական աջակցություն համայնքապետարանի կողմից։ Ծրագիրը կնպաստի համայնքում խնդիրների արագ բացահայտմանը և հնարավորինս շուտափույթ լուծմանը։ Մյուս կողմից սա կլինի արդյունավետ համագործակցության փորձ ոչ միայն Կոմպաս ՀԿ-ի ու համայնքապետարանի այլև քաղաքացիների ու համայնքապետարանի։

ՏԻՄ ներկայացուցիչների համար նույնպես կլինեն իրենց անձնական էջեր, որտեղ իրենք կկարողանան ստեղծել հարցումներ և ուղարկել այդ հարցումները համայնքի սեգմենտավորված հատվածին, հարցման ավարտին կտեսնեն արդյունքները։ Բնակիչները կկարողանան մասնակցել հարցումներին, ինչպես նաև իրենք կունենան հնարավորություն հարց ուղղել ՏԻՄ մարմիններին և ստանալ դիմումի պատասխան։ Ադմինիստրացիայի կողմից տեղադրվելու են նաև համայնքի ավագանու նիստի օրակարգերը և բնակիչները կարողանալու են գնահատել օրակարգի կետերը։ Հավելվածը հնարավորություն կընձեռնի համայնքապետարանի տվյալ ոլորտի պատասխանատուին կամ ավագանու անդամին ուղղել հարց, բարձրաձայնել խնդիր ու ստանալ պատասխաններ։